ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ
2024թ.հունիսի 21-ի № 284 որոշմամբ

ՌԵԿՏՈՐ Է.Մ.ՍԱՆԴՈՅԱՆ

ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՄԲԻՈՆԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

Բովանդակություն

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ 3
2. ԱՄԲԻՈՆԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ, ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ԵՎ ԼԻԶԱՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 3
3. ԱՄԲԻՈՆԻ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 6
4. ԱՄԲԻՈՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ 7
5. ԱՄԲԻՈՆԻ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ 8
6. ԱՄԲԻՈՆԻ ՖԻՆԱՆՍԱ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 8
7. ԱՄԲԻՈՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ 7

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 Սույն կանոնակարգը (այսուհետ Կանոնակարգ) սահմանում է Հայ-Ռուսական համալսարանի (այսուհետ Համալսարան, ՀՌՀ) Ինստիտուտի (ֆակուլտետի) կազմում ամբիոնների (այսուհետ ամբիոն) գործունեության նորմատիվային-իրավական հիմքերը:

1.2 Ամբիոնը հանդիսանում է Համալսարանի կրթական, ուսումնամեթոդական, գիտահետազոտական, գիտամեթոդական գործունեություն իրականացնող, ինչպես նաև գիտամանկավարժական կադրեր պատրաստող հիմնական կառուցվածքային ստորաբաժանումը:

1.3 Ամբիոնը չի հանդիսանում առանձին իրավաբանակն անձ:

1.4 Համալսարանի կառուցվածքում ամբիոնը ստեղծվում է Գիտական խորհրդի որոշմամբ:

1.5 Ամբիոնի գործունեությունը կարգավորվում է Համալսարանի կանոնակարգով, Գիտական խորհրդի որոշումներով, ռեկտորի հրամաններով, ՀՌՀ Ինստիտուտի (ֆակուլտետի) մասին կանոնակարգով, սույն կանոնակարգով, այլ նորմատիվային ակտերով և կարգավորումներով:

1.6 Ամբիոնի մասին կանոնակարգը, դրա մեջ փոփոխություններն ու լրացումները ընդունվում են Գիտական խորհրդի կողմից և ՀՌՀ ռեկտորի հրամանով՝ սահմանված կարգով:

1.7 Ամբիոնները, անկախ կառուցվածքային պատկանելիությունից, հաշվետու են ՀՌՀ ռեկտորին, գործունեության համապատասխան ուղղություններով պրոռեկտորներին (ուսումնական, գիտական և միջազգային համագործակցության գծով):

2. ԱՄԲԻՈՆԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ, ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐՆ ՈՒ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Ամբիոնն ապահովում է.

- ✓ ուսումնական գործընթացի կազմակերպումը և իրականացումը, գիտահետազոտական աշխատանքների իրագործումը,
- ✓ ուսումնական, գիտական և մեթոդական աշխատանքների իրականացումը համապատասխան կրթական ծրագրերի գծով,
- ✓ գիտանորարարական միջավայրի զարգացումը, ամբիոնի դասախոսների և այլ աշխատակիցների գիտահետազոտական աշխատանքը, գիտամանկավարժական կադրերի պատրաստումը և որակավորման բարձրացումը,
- ✓ ամբիոնի գծով իրականացվող կրթական ծրագրերի բազային և աշխատանքային ուսումնական պլանների մշակումը (առկա, առկա-հեռակա, հեռակա ուսուցման ձևերով),
- ✓ բակալավրի, անընդհատ և ինտեգրված, մագիստրոսի և ասպիրանտուրայի կրթական ծրագրերով նախատեսված դասընթացների առարկայական ուսումնամեթոդական կոմպլեքսների մշակում, դրանց վերանայում և արդիականացում,

✓ ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմի անհատական տարեկան ծանրաբեռնվածությունների կազմում՝ Ինստիտուտի տնօրենի հետ համաձայնեցման և ՀՌՀ ռեկտորի հաստատմանը ներկայացնելու նպատակով,

✓ ուսումնական գործընթացի կազմակերպում ամբիոնի կողմից իրականացվող կրթական ծրագրերի գծով,

✓ կամընտրական և ֆակուլտատիվ դասընթացների մշակում և ներդրում ուսումնական գործընթաց,

✓ ուսումնական պլաններով նախատեսված ամբիոնի գծով դասընթացների դասախոսությունների, գործնական, լաբորատոր և այլ տեսակի ուսումնական պարապմունքների իրականացում՝ համապատասխան ուսումնական ծանրաբեռնվածությունների,

✓ ուսումնառողների ընթացիկ, միջանկյալ ստուգումների և ամփոփիչ ատեստավորման իրականացում՝ ամբիոնի պրոֆիլի գծով,

✓ ուսումնառողների ինքնուրույն աշխատանքի ղեկավարում:

2.2 Ամբիոնն իրականացնում է.

✓ Ուսանողներին, մագիստրոսներին, ասպիրանտներին, դոկտորանտներին, ինչպես նաև լրացուցիչ կրթական ծրագրերով ուսումնառողներին անհատական խորհրդատվությունների տրամադրում՝ ուսումնական ծանրաբեռնվածությունների սահմանված նորմատիվներին համապատասխան ծավալով (աշխատատարությամբ),

✓ Ուսումնական պլաններով նախատեսված պրակտիկայի տեսակների կազմակերպում, այդ նպատակով հաստատում և զարգացնում կապեր աշխատաշուկայի կազմակերպությունների և հաստատությունների հետ,

✓ ուսումնական գործընթացի որակյալ իրագործման նպատակով ուսումնա-մեթոդական աշխատանքներ,

✓ դասագրքերի, ուսումնական և ուսումնամեթոդական ձեռնարկների, մեթոդական ցուցուցումների, դիդակտիկ նյութերի, ծրագրային և տեղեկատվական նյութերի մշակում/պատրաստում,

✓ ուսումնառողների շրջանում դաստիարակչական աշխատանքների իրականացում ուսանողական կազմակերպությունների հետ համագործակցությամբ, ուսումնական պլաններով նախատեսված ուսումնադաստիարակչական և արտալսրանային աշխատանքների իրականացում,

✓ ամբիոնի աշխատակիցների մասնագիտական և ստեղծագործական աճին նպաստող աշխատանքներ/միջոցառումներ;

✓ առաջատար մանկավարժական փորձի ուսումնասիրության և դրանք ուսումնական գործընթացում ադապտացման ու ներառման աշխատանքներ,

✓ ամբիոնի դասախոսների և գիտական աշխատակիցների կողմից թեկնածուական և դոկտորական ատենախոսությունների կատարման համար պայմանների ձևավորում, կազմակերպում ամբիոնական քննարկումներ դրանց գծով, աջակցում ամբիոնի աշխատակիցների մասնակցությանը տարբեր գիտական և գիտագործնական միջոցառումներին մասնակցությանը և հետազոտությունների արդյուքների հրապարակմանը,

✓ գիտամանկավարժական կադրերի պատրաստում և որակավորման բարձրացում, այդ թվում ասպիրանտուրայի և դոկտորանտուրայի շրջանակներում,

✓ ամբիոնի դասախոսների գիտական հետազոտությունների ուղղորդում, աջակցություն ամբիոնում գիտական դպրոցների ստեղծմանը և զարգացմանը,

✓ միջնորդում է Ինստիտուտի գիտական խորհրդին՝ ամբիոնի դասախոսներին գիտական կոչումների շնորհման ներկայացման,

✓ ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմում թափուր հաստիքների համալրման մրցույթին ներկայացնում ամբիոնի միջնորդություն և կարծիք առանձին թեկնածուների գծով,

✓ կազմակերպում ամբիոնի պրոֆիլի գծով գործատուների և ամբիոնի շրջանավարտների հետ փոխգործակցությունը և համագործակցությունը,

✓ ուսումնական, ուսումնամեթոդական և գիտական գործունեության գծով փոխգործակցում Համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումների և այլ բուհերի համապատասխան կառուցվածքային միավորների հետ,

✓ կապեր հաստատում գիտակրթական ոլորտի այլ կազմակերպությունների հետ՝ ամբիոնի առաջատար փորձի տարածման և գիտամեթոդական օժանդակության տրամադրման նպատակով,

✓ համագործակցություն ինչպես ՀՀ, այնպես էլ այլ երկրների բուհերի ամբիոնների հետ:

2.3 Ամբիոնն իր դրված խնդիրների իրագործման նպատակով իրականացնում է հետևյալ գործառույթները.

✓ Պետական կրթական չափորոշիչներով և/կամ կրթական գործընթացի կազմակերպման գծով համալսարանական նորմատիվների շրջանակներում ուսումնական պլաններում ծանրաբեռնվածության բաշխում, նախատեսված դասընթացների ուսումնասիրման տրամաբանական հաջորդականության սահմանում,

✓ Կուրսային աշխատանքների թեմաների հատստատում, ամփոփիչ ավարտական աշխատանքների թեմաների ներկայացում ՀՌՀ ռեկտորի հրամանով հաստատման,

✓ ամբիոնին կցված ուսումնական տարածքների (լսարանների, լաբորատորիաների և այլն) օգտագործում լրացուցիչ ուսումնական պարապմունքների իրականացման և ուսումնառողներին անհատական խորհրդատվությունների տրամադրման նպատակով,

✓ լրացուցիչ վճարովի կրթական ծրագրերի իրականացում,

✓ Համալսարանի կողմից հաստատված հաշվետվությունների ներկայացում ամբիոնի կրթական, գիտական, կադրային և այլ գործունեության գծով,

✓ ամբիոնի դասախոսական և ուսումնաօժանդակ կազմի ներկայացուցիչներին, ինչպես նաև ամբիոնի գծով իրականացվող կրթական ծրագրերի գծով ուսումնառողներին խրախուսման միջոցառումների ներկայացում Համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումներ:

3. ԱՄԲԻՈՆԻ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Ամբիոնի գիտահետազոտական գործունեությունը ներառում է հետևյալ ուղղությունները.

✓ կրթության ոլորտում նորարարական գործընթացների հետազոտություններ,

✓ սոցիալ-կրթական նորարարական նախագծերի մշակում և իրականացում,

✓ մասնագետների պատրաստման, վերապատրաստման և որակավորման բարձրացման կրթական ծրագրերի մշակում և իրականացում,

✓ ամբիոնի կազմում գիտակրթական կոմպլեքսների ստեղծում,

✓ Համալսարանի վարկանիշային ցուցանիշների բարելավման նպատակով նորարարական սոցիալ-կրթական ծրագրերի և նորարարական տեխնոլոգիաների ներդրման ուղղությամբ ամբիոնի աշխատակիցների համար խրարուսող և խթանող միջավայրի ձևավորում,

✓ ամբիոնի լավագույն գիտամանկավարժական կադրերի և գիտաշխատողների աջակցություն և խրախուսում, որոնց գիտական նվաճումները ներդրում են հանդիսանում Համալսարանի զարգացման և նրա մրցունակության բարձրացման գործում,

✓ ներհամալսարանական գիտական մրցույթներին ամբիոնի գիտամանկավարժական կադրերի մասնակցությանն ուղղված գիտա-կազմակերպչական աշխատանքների իրականացում,

✓ ամբիոնի աշխատակիցների գիտական աշխատանքների տպագրման գործընթացի համակարգում, այդ թվում ՀՌՀ գիտական հանդեսներում,

✓ դասավանդման տեսության և մեթոդիկայի ոլորտում գիտահետազոտական աշխատանքների իրականացում,

✓ ուսումնառողներին և ասպիրանտներին գիտահետազոտական աշխատանքների մեջ ընդգրկում, նրանց ստեղծագործական ակտիվությանն աջակցություն տարբեր

օլիմպիադաներին և գիտական մրցույթների մասնակցության ապահովման և կրթաթոշակային ծրագրերին ներկայացման միջոցով,

- ✓ այլ կրթական հաստատություններին և կազմակերպություններին խորհրդատվությունների տրամադրում,
- ✓ գիտահետազոտական աշխատանքների քննարկումներին և փորձաքննություններին մասնակցություն, դրանց գիտական և գործնական նշանակության վերաբերյալ եզրակացությունների ներկայացում, ինչպես նաև դրանց հրապարակման և ներդրման երաշխավորում,
- ✓ դրամաշնորհային մրցույթներին և ծրագրերին մասնակցություն, ամբիոնի աշխատակիցների համար անհրաժեշտ պայմանների ձևավորում՝ դրանց հաջող իրականացման նպատակով,
- ✓ մագիստրոսական կրթական ծրագրերի շրջանակներում ուսումնառողների գիտահետազոտական և գիտագործնական աշխատանքների, ինչպես նաև մագիստրոսական ատենախոսությունների թեմաների մշակում և հաստատում (ներկայացում հաստատման),
- ✓ ուսումնառողների կուրսային և ավարտական աշխատանքների գիտական և մեթոդական ղեկավարում, դրանց գրախոսության գործընթացի կազմակերպում,
- ✓ ուսումնառողների, ասպիրանտների և դոկտորանտների գիտահետազոտական գործունեության գիտամեթոդական և կազմակերպակառավարչական ապահովում,

4. ԱՄԲԻՈՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

4.1. Ամբիոնն իր կառուցվածքում կարող է ներառել ուսումնական (ուսումնա-գիտական, գիտական) լաբորատորիաներ, ուսումնական կաբինետներ և այլ ստորաբաժանումներ, որոնք ապահովում են ամբիոնի գործունեության գծով կրթական և գիտական գործունեությունը:

4.2. Ամբիոնի հաստաիքային կազմը ներառում է հետևյալ պաշտոնները.

- ✓ պրոֆեսոր
- ✓ դոցենտ
- ✓ ավագ դասախոս
- ✓ դասախոս
- ✓ ասիստենտ
- ✓ գիտաշխատող
- ✓ ամբիոնի մենեջեր

4.3. Ամբիոնի կառուցվածքում փոփոխությունները իրականացվում են Գիտական խորհրդի որոշմամբ, ռեկտորի հրամանով՝ Ինստիտուտի (ֆակուլտետի) խորհրդի/Ինստիտուտի տնօրենի կամ ամբիոնի վարիչի ներկայացմամբ:

5. ԱՄԲԻՈՆԻ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

5.1. Ամբիոնը ղեկավարվում է միանձնյա և կոլեգիալ կառավարման սկզբունքներով:

5.2. Ամբիոնի կոլեգիալ որոշումներն ընդունվում են ամբիոնի նիստերին, որոնք ղեկավարվում են ամբիոնի վարիչի կողմից: Ամբիոնի նիստերի ընթացքում քննարկվում են ամբիոնի ընթացիկ գործունեության, զարգացման, թափուր պաշտոնների համալրման, գիտամանկավարժական կադրերի ատեստավորման և այլ հարցեր:

5.3. Ամբիոնի անմիջական ղեկավարումն իրականացնում է ամբիոնի վարիչը:

5.4. Ամբիոնի վարիչը անձնական պատասխանատվություն է կրում ամբիոնի գործունեության արդյունքների համար՝ սույն Կանոնակարգին և ամբիոնի վարիչի պաշտոնի անձնագրին համապատասխան:

5.5. Ամբիոնի վարիչը պլանավորում է ամբիոնի յուրաքանչյուր դասախոսի ուսումնական, ուսումնամեթոդական, գիտական, դաստիարակչական և այլ տեսակի աշխատանքների ծավալները իր լիազորությունների սահմաններում հանձնարարականներ և ցուցումներ տալիս, որոնք պարտադիր են ամբիոնի բոլոր աշխատակիցների համար:

5.6. Ամբիոնի վարիչը ընտրվում է Համալսարանի Գիտական խորհրդի կողմից սահմանված կարգով, գաղտնի քվեարկությամբ, մասնագիտական ոլորտի գիտական աստիճան և գիտական կոչում ունեցող, առավել որակավորված և հեղինակավոր մասնագետների շարքից և հաստատվում պաշտոնում՝ ռեկտորի հրամանով:

5.7. Այն դեպքերում, երբ հայտարարված մրցույթի արդյունքներով ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համալրում տեղի չի ունենում, ամբիոնի աշխատանքի անընդհատությունն ապահովելու նպատակով ռեկտորի հրամանով նշանակվում է ամբիոնի վարիչի պաշտոնակատար:

6. ԱՄԲԻՈՆԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Ամբիոնը Համալսարանի կազմում հանդես է գալիս որպես միասնական գիտամանկավարժական կոլեկտիվ՝ պրոֆեսորադասախոսական, գիտական, ուսումնաօժանդակ և վարչական անձնակազմի ֆինանսավորման և նյութական խրախուսման միասնական աղբյուրներով:

6.2 Հիմնական գործունեության տեսակների գծով ամբիոնի ֆինանսավորումն իրականացվում է բյուջետային և արտաբյուջետային միջոցների, ամբիոնի կոմպետենցիաների շրջանակներում իրականացվող առանձին աշխատանքների/ծառայությունների պատվիրատուների միջոցների, դրամաշնորհային ծրագրերի և այլ նպատակային ֆինանսավորման միջոցով:

7. ԱՄԲԻՈՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

7.1 Ամբիոնի գործունեությունը կարող է դադարեցվել Համալսարանի Գիտական խորհրդի որոշմամբ՝ օրենսդրությամբ և ՀՌՀ կանոնադրությամբ սահմանված դեպքերում: